

ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ՕՎԵՐ ՓԼԵՅ ՍՊԸ-ն ԵԶ-ԷԱՃԱՊԶԲ-26/183 ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում
Ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի
	տեխնիկական բնութագիրը
1	Չափսերը. երկարությունը՝ 2.5 մ, բարձրությունը՝ 1.8 մ, լայնությունը՝ 0.5 մ, նստատեղի բարձրությունը՝ 0,6 մ, ճոճանակի կմախքը՝ մետաղական, փոշեներկված, նստատեղը՝ 2 հատ, ռետինե, ամրացումը մետաղական ռետինապատ շղթաներով, տեղադրումը B20 դասի բետոնով, ապահովության գոտին՝ 7x4.5 մ, տարիքը՝ 3-6: Սարքավորումներին ներկայացվող պահանջներ: 1. Անվտանգություն: • Կառուցվածք: Սարքավորումը պետք է լինի ամուր, կայուն և անվտանգ երեխաների օգտագործման համար: Բոլոր տարրերը պետք է լինեն հարթ, առանց սուր անկյունների, ելուստների և բացվածքների, որոնք կարող են վնասվածքներ պատճառել (օրինակ՝ մատները սեղմել կամ կտրվել): Շարժվող մասերը (օրինակ՝ ճոճանակներ, կարուսելներ) պետք է ունենան սահմանափակիչներ և մեխանիզմներ՝ պատահական սեղմումը կանխելու համար: • Սարքավորման բարձրություն: Սարքավորումը պետք է ունենա թույլատրելի բարձրություն տարբեր տարիքային խմբերի համար: Կրտսեր երեխաների համար առավելագույն բարձրությունը սովորաբար չպետք է գերազանցի 1 մետրը, ավագների համար՝ մինչև 3 մետր: Բոլոր բարձր տարրերը (սահարաններ, աստիճաններ) պետք է ունենան բազրիքներ կամ պաշտպանիչ արգելքներ: • Մեղմացնող ծածկույթ: Ամբողջ հրապարակի տակ պետք է տեղադրված լինի փափուկ ծածկույթ (ռետինե, ավագե, խճային կամ հատուկ ծածկույթ), որը նվազեցնում է ընկնելու դեպքում վնասվածքների ռիսկը: Ծածկույթի նվազագույն հաստությունը կախված է սարքավորման բարձրությունից: 2. Նյութեր: • Ամրություն և կայունություն եղանակային պայմանների նկատմամբ: Սարքավորումը պետք է պատրաստված լինի խոնավության, ուլտրամանուշակագույն ճառագայթման և ջերմաստիճանի տատանումների նկատմամբ կայուն

Նյութերից: Հանրաճանաչ նյութերն են՝ մետաղը, փայտը (պաշտպանիչ մշակմամբ), բարձրորակ պլաստիկը: Մետաղական տարրերը պետք է ունենան հակակոռոզիոն ծածկույթ: Պլաստիկ տարրերը պետք է կայուն լինեն գուևաթափման և ճաքճքման նկատմամբ: • Էկոլոգիականություն: Նյութերը, որոնցից պատրաստված է սարքավորումը, պետք է անվտանգ լինեն երեխաների առողջության համար: Պլաստիկները և ներկերը չպետք է պարունակեն թունավոր նյութեր: • Հակավանդալային հատկություններ: Սարքավորումը պետք է կայուն լինի վնասվածքների և վանդալիզմի նկատմամբ: Սա վերաբերում է ինչպես կառուցվածքների ամրությանը, այնպես էլ սարքավորումների ապամոնտաժման կամ վնասման բարդությանը: 3. Էրգոնոմիկա և ֆունկցիոնալություն: • Տարիքային առանձնահատկություններ: Սարքավորումը պետք է համապատասխանի երեխաների տարիքային պահանջներին և ֆիզիկական հնարավորություններին: Օրինակ՝ փոքրիկների համար սահարանները և մագլցման համալիրները պետք է լինեն ցածր, իսկ դեռահասների համար՝ ավելի բարդ և ֆունկցիոնալ: • Չարգացնող ուղղվածություն: Սարքավորումը պետք է խթանի երեխաների ֆիզիկական և սոցիալական զարգացումը, օգնի կոորդինացիայի, ճարպկության, ուժի, երևակայության և հաղորդակցման զարգացմանը: 4. Սպասարկում և խնամք: • Տեխնիկական սպասարկում: Սարքավորումը պետք է լինի հեշտ սպասարկվող և հասանելի զննման համար: Կանոնավոր զննումը և վերանորոգումը պետք է հնարավոր լինի առանց ապամոնտաժման անհրաժեշտության: • Մասերի փոխարինում: Սարքավորման բոլոր մասերը պետք է հեշտությամբ փոխարինվեն մաշվածության կամ վնասվածքի դեպքում: • Մաքրություն: Սարքավորումը պետք է պատրաստված լինի նյութերից, որոնք հեշտ են մաքրվում, չեն կլանում կեղտը և հեշտությամբ ենթարկվում են ախտահանման: 5. Համապատասխանություն ստանդարտներին: • Խաղահրապարակների սարքավորումների բոլոր տարրերը պետք է համապատասխանեն տեղական և միջազգային անվտանգության ստանդարտներին, ինչպիսիք են EN 1176-ը (խաղահրապարակների սարքավորումների անվտանգության եվրոպական ստանդարտ) կամ համարժեքը: Լրացուցիչ: 1. Սարքավորման գույնը և վերջնական տեսքը համաձայնեցնել պատվիրատուի հետ: 2. Պահանջվող երաշխիք՝ 3 տարի:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

СПЛАЙ ГРУП ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом БР-БЦДЦПЗР-26/183 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
1	